243
Ա-49

1856

[illegible]
[illegible]

# ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ ԳԻՐՔ.

Ժ.ողովեալ յաղօթից եկեղեցւոյ և Ս. Ծնողաց վարդապետաց:

Ի Հայրապետութեան Տ՟ն Տ՟ն Ներսիսի, Ե. Կաթուղիկոսի ամէն Հայոց:

1856

45
30654-4.2

**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ**

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ, 3 Генваря 1856 г.

Ценсоръ Н. Кайтмазовъ.

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
12869-58
91-42

243
Ա-49

# ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

տպագրեալ

Արդեամբք և ծախիւք Եղիսաւետպօլցի Յովհաննէս դպրի Տէր Աբրահամեան՝ Տէր Յովհաննէսեանց։

'Ի ՏՓԽԻՍ։

'Ի Տպարանի Յակոբայ Գրիգորեան՝ Արզումանեանց, Հաժտարխանցւոյ։

—

1856

Յառաջաբանութիւն:

Ի մտանելս 'ի հովանա-
ւորութիւն Ներսէսեան
Դպրոցի Հայոց Տփխիսայ՝
'ի դասատուի համաշխա-
կան լեզուի և քրիստոնէա-
կան վարդապետութեան՝
զորս անունն միայն լուեալ
էի, և զուրկ էի 'ի տեղե-
կութենէ նորա՝ անձկանօք
ուսայ, թէ՝ Աշխարհիկն է համ-
բարբառումն [illegible] և արդի [illegible]
և խօսելի հոգեշահ բարբառոյ 'ի
նմանէ: Օ այս սահման աղօ-
թից՝ տեսեալ 'ի քրիստո-
նէական վարդապետութե

...Дом ССР
...А. Мясникяна
...ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՆՎԱՆ

անդ՝ զոր եսն ուսայ, և 'ի
մեր ընդերեալ զառածն, Թէ՝
Նե՛րոց Տ͞ր այլոց, եղի 'ի մտի
'ի պատանեկութեանս հա-
սակի՝ յորում եմս այժմ,
օգտակար լինել ազգիս՝ ի-
մաստնոյն ծառայութեամբ,
իբրև մի յանդամոց նորա։
Եւ տեսեալ թէ տկար է
կարողութիւն իմ 'ի յօրի-
նել զնոր գիրք 'ի պիտանա-
ւորութիւն ազգի և եկե-
ղեցւոյ հայաստանեայց, որոյ
յետին որդի եմ և ես.
հարկ զիս սովորեցայ՝ իւիք
իրօք ցուցանել նմին զիմ
պիտանաւորութիւն։

Վասն որոյ և յանձն առեալ
սրբագրեալ զայս Նշօ-
թամառոյց. գիրք՝ տպա-
գրեալ 'ի ռՃՀ. թուականին
Հայոց, զոր և 'ի լոյս ածեալ
վերստին՝ ընծայեմ բաղձա-
ցուցանողաց սիրելի ազգին
իմոյ 'ի գործածութիւն և
յանմոռանալի պահպանու-
թիւն վաստակոց երջանիկ
նախնեացն. զի ոսկի յուսամ՝
լուսաւորեալ զմիտս նոցա
ըստ սաղմոսերգուին բանի
թէ՝ Մերձեսցեն խնդրուածք
իմ առաջի քո տէր, ըստ բանի
քում իմաստուն արա զիս:

Ազատեսցէ՛ զնոսա ՚ի խոկմանց զունայնութեանց խաբեբայ աշխարհիս. ըստայնմ՝ թէ՝ Մ՝տցեն աղօթք իմ առաջի քո տէր, և բանիւ քում փրկեա զիս: Արգեսցէ զլսարս նոցա. ուղղեսցէ զցանկութիւն կամաց նոցա առ բարին. զօրացուսցէ զնոսա ընդդէմ հոգևոր և մարմնաւոր թշնամեաց. ըստայնմ՝ թէ՝ Ո՛չ երկեայց ՚ի չարէ, զի դու ընդ իս ես:

Ո՛չ և աղերսահայց լինիմ՝ յիմոց համազգայնոց ՚ի կարդալն զայս իմ ընծա-

յաւերժական Աղօթարարք՝
ընդունել իբրև ոչ յիւրէն
նորաձևել ինչ, այլ որպէս ՚ի
նախնեաց անտի յիշատակ
թողեալ մեզ ամենեցուն
յընթերցումն ՚ի ժամ ու-
Պատարագի արարողութեան.
Նմին իրի և խնդրեմ զիս
զպատուաձաւ առաքինութեան
սրտիւ՝ յիշել յաղօթս ա-
ռաջի ամենակալին զենեալն
Գառինն Աստուծոյ, ապա-
ւել զիս յամ փորձութեց
հոգւոյ և մարմնոյ:

Դպիր Յովհաննէս Տէր
Աբրահամեան՝ Տէր Յովհան-
նէսեանց. - Եւխաթէապօլսցի:

## Աղօթք սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի ասացեալ՝ առ դուռն սբ̃ եկեղեցւոյ։

Տաճար ք̃ո և բնակարան սուրբ հոգւոյն՝ 'ի քէն սբ̃ առաքելական կոչեցեալ յորդեգրութիւն հօրն երկնաւորի. այսօր 'ի քեզ կամեցայ պատարագել զառն

անարատ, և ես զխծեալ
ելից առ դուռս քո և աղա-
չեմ զքեզ, մաքրեա զիս
վերստին լուացմամբ. սըր-
բեա 'ի մեղաց իմոց և
արժանի արա մտանել ա-
ռաջի սրբոյ սեղանոյդ
յերկրպագութիւն:

Եւ մտեալ 'ի տաճարն ասա-
ցէ նորին աղօթս սրբոյն Յով-
հաննու;

ՏԷՐ մի՛ պատկառեցուցես
զիս 'ի յաւիտենական քոյոց
բարեացդ: Տէր փրկեա զիս
'ի յաւիտենական տանջա-
նացն: Տէր եթէ բանիւ,

եթէ գործով, եթէ մը-
ծութը̃ եւ եթէ մտածութը̃
մեղայ քեզ, թողութիւն
շնորհեա ինձ: Տէր մըր-
կեա զիս յամ՛ փորձութե̃ց
եւ 'ի չարաց: Տէր փրկեա
զիս յամ՛ մտածութեանց
եւ 'ի հեղգութեանց եւ չար
սովորութեանց: Տէր լու-
սաւորեա զսիրտ իմ՛, զի
խաւարեցուցին զիս չար
ցանկութիւնք: Տէր ապա-
քէն ես որպ̃ մարդ մեղայ,
իսկ դու որպ̃ ած̃ ողորմեա:
Տէր տե՛ս զտկարութիւն
հոգւոյս իմոյ, եւ ծաղեա
զշնորհս քո յօգնականու̃ի

ինձ. զի յիս փառաւորեսցի
անուն քո սբ: Տէր գրեա
զանուն ծառայիս քո 'ի
դպրութեան կենացն, շը-
նորհելով ինձ անվախճան
բարի: Տէր ոչ արարի ա-
ռաջի քո բարի, այլ տուր
ինձ քոյին քաղցրութեամբ
դառնալ 'ի սկիզբն բա-
րութեան: Տէր ընկեա 'ի
սիրտ իմ զցօղ շնորհաց
քոց: Տէր ած երկնի և
երկրի՝ յիշեա զիս զմեղա-
ւորս, յորժամ գաս ար-
քայութեամբ քով. զի
օրհնեալ է անուն քո և
փաւրեալ յաւիտենս ամէն:

Աղօթք զոր ասեն 'ի վերջն սուրբ պատարագին:

* Երբ ասէ ժամհանայն, Տէր ընդ մեր որոյ հաղորդա-ընծայք և այլն. Դաս ասա՛:

ՏԷՐ իմ՝ անքննելի է Աստուծոյդ խոր կարգադրու-թիւն և անճառ և անհա-

սանել են փառք քո. որ-
պէս ողորմութիւնդ անչափ է,
նոյնպէս և գթութիւնդ
անբաւ: Աղաչեմ զքեզ՝
բարեխօսութեամբ սրբոյ
քահանայիս, յառատ ո-
ղորմութենէդ՝ նայեաց 'ի
սուրբ տաճարս և յամե-
նայն ժողովուրդս, նաև
յիս անարժանս. և համա-
րեա́ զիս աղօթակից սոցին,
և պարգևեա́ առատապէս
զողորմութիւնդ քո. վասն
զի փառաբանիչ եմ սուրբ
երրորդութեան:

* Ապա դպիրքն ասեն ,,ողորմեա
Տէր'' և համ բուրեալ ծխա-

ըէ շատուէտաբանն. Պտու տատ՛:

Համբուրելով ողջունե-ցից բանից սրբոյ աւետա-րանիչայն. վասն զի կարօտ եմ ’ի լսել զգործսն այ:

*Քահանայն ’ի ձայնուէ ասէ՝ „Տէր ընդ մեզ՝ շնորհատու-րուծ“. Պտու տատ՛:

Սրբարիչդ իմ աստուած՝ որ զմեր հոգեղէն բնութիւ արժանաւորեցեր ըստ դա-սուց վերնոյն քեզ փառա-բանութիւն մատուցանել. արժանի՛ արա զանպիտան ծառայս քո՝ հզօրիդ փառա-տալ այժմ և յաւիտեան:

* Դողերգն ,,Տէր ողորմեա՛''.
Դառն տաղ՛:

Ես ունիմ առ քեզ սէր և աղաչեմ, ողորմեա՛ ինձ 'ի մեծի քում ողորմութենէդ՝ գթալով 'ի ծառայս քո. և առաքեա՛ 'ի վերայ իմ զողորմութիւնս քո:

* Ըստ հանգոյն ,,Տէ ողորմած և մարդասէր''. Դառն տաղ՛:

Մարդասիրին աստուծոյ և ողորմածին՝ տայ փառս և պատիւ, այժմ և յաւիտեանս:

* Երգ չորրորդ ,,Աւետարանն''. Դառն տաղ՛:

Աղաչեմ զքեզ տէր իմ յս̄ ք̄ս, բա՛ց զլսելիս իմ, սրբեա՛ զսիրտս իմ և արժանի՛ արա լսելոյ բանից սրբոյ աւետարանիս քո· անմոռանալի մտօք պահել զհրամայեալսն 'ի սմանէ, յորում փառք քեզ ա̄ծ։

* Եւ յաւարտել աւետարանին ,,Հաւատամքն‘‘ 'ի լման ասա՝. որ է սոյն այսպէս։

## Հանգանակ Նիկիական։

Հաւատամք 'ի մի Ա̄ծ՝ 'ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի· երևելեաց և աներևութից·

Գոս. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР

Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ՝ ծնեալ յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ո՛չ արարած: Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր՝ որով ամ ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ

կատարելապէս ՚ի Մարիա-
մայ սրբոյ կուսէն Հոգւովն
սրբով: Որով էառ զմար-
մին, զհոգի և զմիտ. և
զամ՝ որ ինչ է ՚ի մարդ,
ճշմարտապէս և ո՛չ կար-
ծեօք:

Չարչարեալ, խաչեալ,
թաղեալ, յերրորդ աւուր
յարուցեալ. ելեալ ՚ի յեր-
կինս՝ նովին մարմնով նըս-
տաւ ընդ աջմէ Հօր:

Գալո՛ց է նովին մարմնովն
և փառօք Հօր ՚ի դատել
զկենդանիս և զմեռեալս;
որոյ թագաւորութեան ո՛չ
գո՛յ վախճան:

Հաւատամք և 'ի սուրբ Հոգին յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս. որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ 'ի սուրբսն։

Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և Առաքելական եկեղեցի։ 'Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ 'Ի յարութիւնն մեռելոց. 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց։

Յարքայութիւն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս։

* Սարկաւագն „Եւ եւս խաղաղութեան''. Դպիր ասէ՛։

Խաղաղութեամբ տուող հայր ամ, մաքուր և անբիծ հաւատով 'ի ժամ պաշտօմանց աղօթից՝ աղաչեմ զքեզ. որպէս զի արժանի ընդունելութե արասցես և լուիցես ձայն աղաչանաց իմոց, և ողորմութեամբ քով թողուցուս զյանցանս իմ. տէր իմ աղաչեմ զքեզ՝ զի յամ ժամ մնացէ աղերս անարժանիս առաջի քո.

զի ահաւոր և մեծ է տէ-
րութիւնդ քո. տուր ինձ
այսր միաբան լինել ընդ-
սուրբս քո, ՚ի մի հաւատս
վաստակել բարեմտութբ̅
՚ի գործս արդարութեան.
և պահեսցես ՚ի վերայ իմ՝
զշնորհս արդարութեան և
ողորմութեան քո. ա̅ծ
ամենակալ կեցո՛ և ողոր":

* Քահանայն ՚ի ծածուկ՝
„Տէր Տէր ո փրկեա յա̅ զա̅":
Դասն ասա՛:

Քրիստոս որդի աստու-
ծոյ՝ որ վասն մեր համբե-
րեցեր մահու խաչի, և

զչարչարիլ յանձն առեր. և զառատապարգև սուրբ հոգին հանդուցեր յառաքեալսն: Աղաչեմ զքեզ՝ արժանի արա և զիս տէր առատ քոյին պարգևացդ մաքրելով ՚ի մեղաց:

* «Քահանայն՝ „որպէս զի արժանաւորս": Դպիրն ասէ՝:

Ընդ ամենեսեան արժանաւորացս փառաւորեմ զՀայր և զՈրդի և զսուրբ հոգին այժմ և յաւիտեանս ամէն:

* «Քահանայն՝ „խաղաղութիւն ամենեցուն": Դպիրն ասէ՝.

Քեզ մերկէլ. խմց ան-
կեալ երկրպագանեմ. իս
զի գիտող ես ամ խորհրդ-
դոց և գործոց։

Սղաչեմ զքեզ՝ պահեա՛
զիս յերկիւղէ չարեաց. և
նման քոյին ճշմարիտ եր-
կրպագողաց զիս զանար-
ժանս համարեա՛. զի և ես
ճշմարիտ հոգւով քեզ մյտ.
խմց այժմ և միշտ և հա-
նապազ երկիւղիւ երկիր
պագանեմ. վասն զի քեզ
մի երրորդութեանդ վա-
յելէ փառք պատիւ այժմ
և միշտ և յաւիտենս ամէն։

※ Սարկ՛. „սաղմոս ասացէք". Պատ. սա՛:

Քն ած՝ որ խոնարհեցար մարմնով և արեամբ քո գալ 'ի պատարագիլ գառնդ անարատ. և հրեշտակային սպասաւորութեամբք լցեր զեկեղեցի քո սուրբ. և զիս զանարժանս արժանաւորեա ընդ նոսին զսրբասացութիւնս քեզ մատուցանել. ամէն:

※ Պաշտօնեայն տէրն՝ „սրբասացութիւնն". Պատ. սա՛:

Տէ՛ր իմ յս̃ ք̃ս փառք քեզ՝ որ վասն մերոյ փըր-

կութեան խոնարհեցար և յանձն առեր պատարագիլ 'ի միջի մերում մարմնով և արեամբ քով սրբով:

* Սարկաւագն՝ „Տ՛ ող յե-րեկոյեց“. Դուռ աաա՛:

Աղաչեմ զքեզ տէր՝ մի՛ համարիր զիս ընդ երե-խայսն. և ո՛չ ընդ այնոսիկ որք թերադոյնք են 'ի հա-ւատս դաւանութեն. այլ 'ի յազգէ մինչև յազգ զքեզ ծանեայ հարցն մերոց ած, և ճանաչեմ ած աբ-րահամու, ած իսահակայ և ած յակոբայ. և աղաչեմ

զի մի՛ ընդ անմաքուր ապաշխարողս համարեսցիս զմերձ կալս իմ առաջի քո ։

* Դաշներգն՝ ,,Մայրն Տէրուն".
Դասն ասէ ։

Բանին այ տերունական մարմնոյդ և փրկական արեանդ առաջի՝ հրեշտակային զօրութիւնքն յաներեւոյթս երգեն ողմ քեզ վայելէ զօրբասացութիւն տեառնդ զօրութեանց. և որ զիմ՝ նուաստութիւս արժանաւորեցեր փառաբանիչ լինել, ընդ նոսին նուագելով. սբ տէր, սբ

տէր, սուրբ տէր և ողոր-
մյ և տէր զօրութեանց,
քեզ փառք յաւիտեանս.
ամէն:

* Սարկաւագն՝ „Եւս և խաղաղութեան“. Դպիր ասէ՛:

Խաղաղութեանց տուող
Քս Ած՝ անկանիմ յաղօթս
առաջի սուրբ սեղանոյդ քո,
և աղաչեմ զքեզ տէ՛ր ա-
հիւ մեծաւ. ո՛չ խղճիւ
դայթակղելով. ո՛չ սրտիւ
խորամանկելով. ո՛չ պատ-
րանօք խաբողին. և ո՛չ
երկմիտ թերահաւատով.
այլ աղաչեմ՝ յաղթեմ խա-

բողջն, և պահեա՛ յուղիղ վարս․ ՚ի պարզ միտս․ և միամիտ սրտիւ ունիլ զկատարելապէս հաւատս հատուցմանց փոխարէն սիրոյ քո ։

Շնորհեա՛ ինձ տէ՛ր առաւելուլ ՚ի յա̃մ՝ գործս բարութե̃․ անկեալ կամ՝ յաղօթս առաջի ք̃ո սեղանոյդ ս̃յ լինի̀ց․ և խնդրեմ գտանել զողորմութիւն քո ՚ի մեծի աւուր յայտնութե̃ քո յ̃ս ք̃ս փրկիչ իմ՝ կեցո՛ և ողորմեա՛ ։

* Քահանայն՝ „տէր յ̃ց զօ-

բունէսյ՛՛։ Պետու տառ՛։

Թագաւոր յաւիտենից՝
քո՛ են ամ՝ արարածք և
զօրութիւնք. և զմեր հո-
ղեղէն նուաստութիւն սի-
րեցեր մարդասիրութեամբ.
և խոնարհեցար 'ի մեր
մարդկային սպասաւորելն։
Աղաչեմ զքեզ տէր՝ զի և
ինձ լիցիս 'ի բժշկութիւն.
շնորհօք մարդասիրեդ քո և
տեառնդ իմոյ յսի քսի,
ընդ որում քեզ հօր և հոգ-
ւոյդ սրբոյ փառք յաւի-
տեանս ամէն։

* Աղաչեմ՛՛. ,,ողջոյն տառ

միմիանց''. Դարձ ասա՛:

Մերձ առ դուռն կենաց անկեալ կամ՝ առաջի տն̃ղ խմ̃ց աղօթելով. և աղաչեմ արժանաւորեա՛ զիս ան̃ ածային խորհրդոյս:

* Սարկաւագն՝ ,,Ահէա''.

Դարձ ասա՛:

Մե՛ծ է ահ և երկեւղ քո՛ւ վերայ իմ. շնորհեա՛ բարուոք զգուշանալ ինձ առ քեզ տէր իմ և ա̃ծ:

* Սարկաւագն''. ,,պատարագ ք̃ս''.

Դարձ ասա՛:

Քո̃ գառն ա̃յ՝ որ մատ-

չէս պատարագ՝ վասն փըրկութեան մերոյ․ դու ես ողորմութիւն և պատարագ խաղաղութեան․ և արժանի օրհնութեան ։

«Ընդհանրայն» „Ողորմեա՛ մեզ"։

Դպիրն ասէ՛։

Հայր և որդի և սուրբ հոգի՝ համգո՛ 'ի վերայ իմ՝ զշնորհս և զսէր քո ա̃ծայլին զօրութեանդ՝ զոր ետուր մեզ պատարագել 'ի քահանայէս, հատ՛ զփոխարէն ըստ հոգւոյ սորա ։

* Սարկ՝․ „'ի Տէ՛ր ընծայեցուսցէ՛"․ Դպիրն ասէ՛։

Ած եմ առ քեզ 'ի վե՛ր ընծայեցից զմիտս իմ սրբութե յածյլն երկնուղէդ· և առ քեզ ունիմ զյոյս իմ տէ՛ր ամենակալ:

* Սուրբ՛. „Էս Գոհացարուք“.
Դսու տաս՛:

Գոհանամ արժանաւորապէս բոլորով սրտիւ իմով զմխիթարիչ մեր հոգւոյդ:

* Յահանայն՝ „արքա՛ն է աուագայր“. Դսու տաս՛:

Գովեմ տէ՛ր՝ վասն զի ո՛չ բաւէ հանդուրժել և կալ առաջի քո, երամ

դասուց հրեշտակաց 'ի
լուսաւորեալ շնորհաց ա՟ծու-
թեանդ. ո՛վ տէր ա՟ծ իմ՝
մե՛ծ են շնորհք ա՟ծուե՟դ
քո. զի զմեզ արժանի ա-
րարեր զքոյին ա՟ծոյին մար-
մնոյդ՝ 'ի միջի մերում պա-
տարագ մատուցանել. և
հաճելի եղև մեր սպասա-
ւորելս ա՟ծուե՟դ քում՝ ընդ
սերովբէից և քերովբէից
միաձայն համարձակելով և
ընդ նոցին ասելով, սուրբ
ս՟բ ս՟բ տ՟ր զօրուե՟ց՝ լի՛ են
երկինք և երկիր փառօք քո:
* Բ[illegible]. ,,ս՟բ ս՟բ ս՟բ տ՟ր".
Դ[illegible] ասեն:

Օրհնեմք զքեզ ած Հայր
ընդ որդւոյ քում՝ միածնի
և ազատիչ սուրբ հոգւոյդ.
որ ո՛չ անտես արարեր ըզ-
պարտեալսն 'ի ձեռաց մա-
հու զնախնի հայրն մեր. և
զամենեսեանս, զորս քեզ
յորդէգրութիւն կոչեցեր
մկրտութ՟ սբ՟ աւազանին. և
վասն մերոյ փրկութեան
առաքեցեր զորդիդ սուրբ
մարմնանալ 'ի սբ՟ կուսէն,
բառնալով զդատապարտու՟ն
յանցանաց նախամօրն մե-
րոյ. որ էր մեր 'ի մարդոյս
զչարչարելի մեղաւոր կենց.
և զմեռանելի կամաւ հօրդ

յանձն էառ ։

Օ՛ քեզ որդի իմ փառաւորեմ․ որ ետուր մեզ հաւատայելոյս՝ ի մխիթարութիւն ընդ սրբոյ մարմնոյ քում և ընդ պատուական արեանդ զհացն կենաց․ և զբաժակն փրկութեան ՚ի մաքրումն․ աղաչեմ զքեզ տէ՛ր՝ արժանաւորեա՛ զիս զանարժանս լինել տաճար մարմնոյդ սրբութեան․ և բաժակի սրբոյ արեանդ բնակարան ։

Յայտնի՛ է տէ՛ր՝ զի ո՛չ կարէ կեալ առաջի քո երկինք երկնայնօք և երկիրս

երկրայնոք · որ վասն զի
քո՛ եղև կամքդ ։

※ «Քահանայն՝ „[illegible]“. [illegible]՝ ։

Ա՟ծ մարդասէր՝ որ առա-
քեցեր զորդին քո, և նորին
ա՟ծայնին կարողութ՟ն միածնի
որդւոյ քո, զհայրական գը-
թութեան քո ծանեաք · վ՟ն
զի ա՟ծապէս էր խաչին կա-
մօք վ՟ն մեր · սոյնպէս ժուժ-
կալութ՟ե երեքօրեայ թաղ-
մանն · և երանաւէտ յա-
րութեանն · և ա՟ծայնին համ-
բարձմանն փառօք հօրդ · և
ընդ աջմէ քումմէ նստելոյն ·

զօրս հաւատամ՝ և երկիր պագանեմ:

※ Քահանայն՝ „պահպանեա և շնորհատուութեամբ“. Դասն ասէ:

Զքեզ ք̃ս որդի աստուծոյ՝ յանարատ կուսէն ծնեալ հաւատամ՝. և միւս անգամ՝ գալստեանդ ակն ունիմ. և զքեզ փառաւորելով օրհնեմ՝ յամ̃ի օրհնեալ:

Քահանայն՝ „շնորհեա տէր և տէր“. Դասն ասէ:

Տէր մեծ և ահաւոր է խորհուրդս այս խոնարհութեանդ քում. օրհնեմք զքեզ տր̃. զի սուրբ զմեզ

զունայնացեալս ո՛չ մեռեալս արարեր, այլ սեպհականեցեր. և զքեզ տէր ա̃ծ գովեմք և փառաւորեմք յաւիտեանս ամէն:

※ «Քահանայն՝ „Երկիրպագանեսցուք և աղաչեսցուք“. Դու տէր:

Յիշեա՛ տէր՝ զի դու միայն ես մաքուր 'ի մեղաց անարատ և անապական հօգի ա̃մ. քանզի ամենեքեան 'ի սաստէ քումմէ որպէս մոմ՝ 'ի հուր հալէիմք. և ունիմք զքեզ միջնորդ և վասն մեր բարեխօս և պատարագիչ փրկական մարմնոյ և արեան

փառակցին քում մեզ ընդ ձեռամբ մեր քահանայիս ։

Ողջունեմք զքեզ տէր՝ զի մարդասիրութեամբ քո արժանաւորեցեր հանգուցանել ՚ի մէջ մեր զշնորհս հոգւոյդ սրբոյ . մեք զի մեր տէր հաւատացեալս ՚ի քեզ՝ յիւրաքանչիւր կերպս և ՚ի կարիս որք կենդանիք եմք այժմ, և որք հանգուցեալքն են ՚ի քեզ . ընդհանուր ամենեքեան սրբն պատարագչութեամբն հաստատեալ կամք ՚ի յոյս և ՚ի հաւատս մեր ։

* Եղանակայն „Աղէտ որս և Մեղ այս արաս“. Պաշտ սաղ:

Աղաչեմ՝ Տէրեմ Տէր. այց արա և ինձ մեղուցել-ւոյս. զի լուացայց 'ի մե-ղաց յառաջ քան զելանելն իմ յաստեացս. և այլ ո՛չ ևս դարձայց:

* Եղանակայն „Տէրամեծին ամե-նաւորին“: Պաշտ սաղ:

Դու որ պատարագես յիշա-տակեսցես ամենայնի մարդ-կայ. և ամենազօրելի մե-կերտեչն. և նախասիրայն քո-քս. աղաչեմ յիշեա՛ քո տէ-ղիս զանարժանս նմջեցե-

լովք իմովք և ողորմեա՛ մեզ :

* Սարկ''. ճաշոցն՝ ,,առաջա- լոյ ,,Էոյ''. Պատ առ՛:

Յիշատակաւ սրբոց առաքելոյն՝ որք դարձուցին զաշխարհս 'ի կռոյն 'ի պաշտելութենէ յած գիտուէ, աղաչեմ՝ յիշեա՛ զիս զամբաժանս ննջեցելովք իմովք :

* Սարկ''. ,,առաջնորդացն''. Պատ առ՛:

Սուրբ առաջնորդացն՝ և մերոց Հայրապետացն՝ և որք զմեզ լուսաւորեցին 'ի Հաւատս մեր, յիշատակաւ

հոգւոյն աղաչեմ յիշեա՛ և զնա
տէր՝ զանարժանս ննջեցե-
լովք խմբովք՚ի մէջ պարգս :
* Սարկ՛. „Միածնայեղոյ".

Դաս առ՛:

Աղաչեմ զքեզ տէր՝ ա-
ղօթիւք սրբոց միանձանց
ճգնաւորացն. և որոց հոգւա
աշակերտեցան, մէջ պատա-
րագիս յիշատակաւն տէր
զանարժանս ննջեցելովք
խմբովք յիշեա՛ :
* Սարկ՛. „Նախածնաւորաց".

Դաս առ՛:

Ընդ որում յիշատակէ մէջ
պատարագս զթագաւորն

և զհաւատացեալ իշխանսն, աղաչեմ և զանարժանս ի-մովք ննջեցելովքս յիշեսցես ողորմութեամբ քով:

* Սարկաւագն. ,,ընթեր հանուր''.
Դպիրքն ասեն:

Տէ՛ր ած՝ յուսոյն մեր ակն ունիմք 'ի շնորհս սբ պատարագիս. զի սովաւ եղիցի յիշատակութիւն ընդհանուր հաւատացելոց 'ի քեզ. և ո՛չ միայն առնելով զարս և զկանայս. զծերս և զմանկունս. և որք 'ի չափ հասակի առ քեզ են հանգուցեալք: Աղաչեմ զքեզ

քս տն. զի և ինձ անար-
ժանիս, և տմ՝ հաւատայել
ննջեցելոյն սուրբ պատրգս
եղիցի յիշատակ. որ տն
կեցո՛ և ողորմեա՛:

* «Քահա». „Յիշեա՛ տէր".

Դպիր ասէ՛:

Ա՛ծ յաւիտենական՝ աղա-
չեմ՝ զքեզ յերես անկեալ
մաղթանօք. զի շնորհօք
ողորմութեդ. քո պահեսցես
անշարժ հաստատութե՛ զբ-
նակարան երկնաւոր զօրու-
թեանցդ՝ զտեղի ապաստա-
նիս զսբ և զառաքելաշնորհ
կաթուղիկէ եկեղեցիս, ե-
պիսկոպոսապետօք և եպսօք

քահանայիւք և մրկուղօք՝ և զամ՛ ժողովրդեան ամէն։

* Սարկ՛. ,,Գոհութիւն և փառաւորութիւն''. Դու տաս՛։

Քեզ այժմ խնդ՛ տամ զանչափ գոհութիւն և զփառաբանութիւն. որ արժանաւորեցեր զմեզ այս պատուոյս. Դու տր՝ որ 'ի յերկնից իջեր 'ի մեր երկիրս, խնդրելով զկորուսեալ և զմոլորեալ ոչխարս. վասն զի դու ես հովիւ բարի՝ որ եդեր զանձն քո 'ի մեր բանաւոր հօտիս. և յաշխարհ եկիր՝ զի զմեղաւորսն կեցուսցես սրբու-

Թեւածն ․ որ է առաջին եւս եմ՝ կորուսեալ, ողորմեա ողորմած ․ և յարարածս քո գթա գթածէր ․ ողորմեա և ստեղծուածոց ձեռին քո ․ և հայրապետս մեր (այս անուն) կեալ ողջ վայելել հայրապետ սրբոց ։ Ընդ նմին պարգեւեա շնորհս, քահանայից որք այժմ աստ, և ընդ նմ ունկնդիրս պատարագին. մեր մատուցանողք են ։ Դարձեալ աղաչեմք զքեզ տէր, զի տացես յաղթութ թագաւորաց քրիստոնէից կալ ՚ի պատերազմի ընդդէմ հակառակի խաչին քոյ ։

Ընդ որում՝ և առաւելայն աղաչեմք վասն դաւանողին մի̃ երրորդութեանդ ամենաբարեպաշտ թագաւորին մերոյ (այս անուն) զի պահեսցես ընդ հովանեաւ քո զօրօք և իշխանօք և ամ̃՝ հաւատացելովք։ Պարձեալ աղաչեմ՝ զքեզ մի̃ երրորդութի̃ վ̃ս ամ̃՝ հաւատացել ննջեցելոց, իմոց և օտարից, ծանօթից և անծանօթից. և ամ̃՝ բարերարաց ազգիս հայոց. սոյնպէս և զիս զանարժանս, գթալով յիշեսցես. Հանգո՛ քրիստոս և ողորմեայ ամենայնի։

* Քահա՛. „Ողորմեա՛ Տէր“.
Դաս ասա՛։

Աղաչեմ յիշեա՛ Տէր և ողորմեա՛ց այնոցիկ՝ վասն որոց մեք պատարագս մատչիմ. և մեզ ամենեցուն զտանել զհոգևոր պէտս և զմաքրուն մարմնոյ։ Աղաչեմ հա՛ն յինէն զսիրտ քարեղէն . և շնորհեա՛ առատաձեռն լինել ինձ առ պէտս սրբոյ եկեղեցւոյ քո . տալ և աղքատաց վասն սիրոյ՝ և զհարիւրապատիկն առլոյ . հանգո՛ և զննջեցեալսն մեր . մեզ զի 'ի քեզ յանձն արարաք յիշատակութիւն և քեզ

փառք յաւիտեանս ամէն :

※ Ձայնադարձ՝ „Եւ եղեւ ողորմութիւն“. Գլուխ առա՛ջ :

Օրհնեալ ես Քս Ած մեր. որ արժանաւորեցեր զմեզ չարչարաց և ողորմութեան քում, պարգևել մեզ սուրբ քահանայիւս : Ար՝ զքեզ ընդ հօր և սբ հոգւոյդ փառաւորեսցուք, այժմ և յաւիտեանս ամէն :

※ Ձայն՛՛. „Ով ճշմարտութիւն“. Գլուխ առաջ :

Տէր կմ՝ և արարիչ՝ որ ո՛չ գարշեցար ՚ի մէնջ կոչել զմեզ յորդէգրութիւն

հօրդ երկնաւորի. և մեք պատուիրանաւ համարձակեցաք հայր ասել. Թէպէտ և ոչ եմք արժանի: Այլ արդ՝ այժմ սկսայց խօսիլ առ տէրդ իմ, քանզի ես հող եմ և մոխիր իսկ. որդն եմ և ո՛չ եմ մարդ. Նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդոց. տուր ինձ բան՝ որ բանայ զբերան իմ. զի 'ի քէն է ամենայն տուրք բարեաց, և ամենայն պարգևք կատարեալք 'ի վերուստ իջեալ 'ի հօրէն լուսոյ: Պաղատիմ անարժանապէս և աղաչեմ աղերսանօք, զի

մի՛ դարձոյց տառապանօք. այլ հանդիպիլն արժանաւորեցայց յոր յուսամն. և այսպէս եկից ուրախութ՟ և հաստատեալ սրտիւ խմնլ առ քեզ: Ողորմեա՛ ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմութե՟ քում. զի՛ ի քեզ յուսացայ անձն իմ. ողորմեա՛ ինձ տէ՛ր՝ զի հիւանդ եմ ես. ո՛վ բժիշկ հոգւոց և մարմնոց՝ ահա՛ մերձ կամ ահաւոր բեմիդ քո. բուռն հարեալ զանարատ ոտից քոց. այսպէս պաղատիմ և աղաչեմ հանդերձ սրտիւ բեկելով և խոնարհութ՟. քաւեա՛ զիս

զմեղաւորս, Թողուն առմ ինձ անպիտանիս և տառապելոյս. Նայեա՛ց 'ի սուրբ բնակութենէ քումմէ 'ի վերայ իմ՝ եղկելոյս:

* «Քահ»․ „Եւ տուր մեզ համարձակաձայն". Դուռ տառ՝:

Ամենակալ Տէր՝ և Տէր գոյից արարիչ. որ զայս հրամայեցեր որդւոյ քում ուսանիլ մեզ աղօթելով առ Հայրդ. ո՛չ առաւելաբանել իբրև զհեթանոսըս, այլ սակաւք. Հա՛յր մեր. որ և ասէ այսպէս.

## Աղօթք տէրունական:

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ 'ի չարէ: Զի քո՛ է արքայութիւն և զօրութիւն, և փառք յաւիտեանս. ամէն:

* Ձայն՛. „Աւէր աւերման Տէր".

Դառն տառ՛:

Յամի տէր մեր յս̃ քս̃՝ զքեզ աղաչեմ. մի՛ տար զիս ՚ի փորձութիւն և մի՛ ՚ի դատապարտութիւն, այլ ողոր-մեա՛ և փրկեա՛ և ազատեա՛ յամ չարեաց. զի քո՛ է արքայութիւն և փառք յա-ւիտեանս. ամէն:

* Ձայն՛՛. „Որ անճառն է".

Դառն տառ՛:

Ողորմեա ծառայիս ՚ի շնորհաց քո՛ հոգւոյդ. վասն զի քո՛ առաջի անկեալ եր-կիր պագանեմ արժանաւո-

ընդ ծնողին լուսոյ։

* Ձայն". „Ձայնիւ Յիսուսի".

Դառ առ։

Ձայնիւ յին որդւոյդ քո՝ տացուք փառս անդ մերոյ այժմ և յաւիտեանս։

* Սարկաւագ". „զերծանուցանել".

Դառ առ՛։

Խոստովանիմ և հաւատամ զի դու ես որդի այ. որ բարձեր զմեղս աշխարհի. դու ես միայն սբ. դու ես միայն տէր եմ յս քս։

Ձահանայն՝ „օրհնեալ հայր որդի հոգի ճշմարիտ". Դառ առ՛։

Օրհնեմ զքեզ հայր սբ

ած ճշմարիտ . և հաւատամ ընդ որդւոյ :

Օրհնեմ զքեզ որդի մի ած ճշմարիտ . և հաւատամ ընդ հօր :

Օրհնեմ զքեզ հոգի մի ած ճշմարիտ . և հաւատամ ընդ հօր և ընդ որդւոյ : Խոստովանիմ զերրորդութիւն անբաժանելի և զմիասնական աստուածութիւն ամէն :

* Քաղ . „Նայեաց ինձ Տէր“.

Դառն ձայն՝:

Որ՚ի հօրէ ո՛չ մեկնեցար որդիդ այ . այժմ է՚ի միջի մերում շնորհք սբ հոգւոյդ .

արժանաւորեա՛ եւ զիս զանարժանս գտանել ողորմութիւն ՚ի .քէն :

※ «Ձայն». „Տէր Ած մեր որ կոչեցեր“. Դառ տառ:

Ած յաւիտենից՝ որ շնորհիւ քո աւազանին ՚ի .քրիստոնէութիւն կոչեցաք . եւ արժանի եղէ տեսանել զպատկերդ փրկական . մե՛ք զի յանձառելի միութենէդ սրբոյ երրորդութեդ , խոնարհեցար ՚ի մարդկեղէն բնութիս մեր . եւ մարմին առեալ յանբիծ կուսէն Մարիամայ վս փրրկութեան մերոյ ՚ի յանյա-

նաց. և ետուր մեզ մխի-
թարութիւն: Նա որպէս
առեր հաց և գինի՝ յածյին
մարմին և յարիւն յօրինե-
ցեր. և ետուր քոյին զնէզ
արեամբդ հաւատայել ծա-
ռայից, յիշատակ քեզ
մեալ. և փրկութիւն մերոյ:
Նա ես մեղաւորս արտաս-
ուալից հառաչմամբ գոչե-
լով աղաղակեմ առ ճշմրիտ
նախատօնիպ և յարայոյց
պատկերդ ̃քս. և որպէս զի
կարող ես տէր փրկեա զիս:

* "Յաւհ". „Ի տէր տէր պատ".
Գոռ. տառ:

Սուրբ սուրբ սուրբ է մարմինդ տիրունական ․ որ վասն մեր իջեր յերկնից և բաշխիս 'ի միջի մերում ․ զքեզ գիտեմ կեանք իմ՝ և յոյս յարուէ ․ դու քաւիչ մեղաց իմոց և մաքրութիւն յանցանաց ․ և քեզ վայելէ երկնաւոր թագաւորին տամ՝ քաղցր սաղմոսերգութիք և հոգևոր պաշտօնիւք ։

* Պաղերա ԵրԳԷՆ ,,Բ տա- տարաԳԷալ''. Պոռ աաա:

Ով անբաւ բարերարդ, անկեալ երկիր պագանեմ ։ Վասն զի սոսկալի՛ է խոր-

հուրբ որդւոյն քո · որ այսօր պատարագեցաւ 'ի մէջ մերում· և զմարմին իւր բաշխելով տայ մեզ 'ի կերակուր· և զարիւն իւր սուրբ նոյնպէս ցօղէ 'ի մեզ: Արժանաւորեա՛ կոչմանս 'ի ճաշակումն աղաչեմ Տէր · Եւ զի քաղցր ես ալէլուիայ· ընդ հրեշտակս քո օրհնեմք ալէլուիայ· և ընդ ամ՛ քո զօրութեամբ ալէլուիայ:

※ Բան՛՛. ցած ,,Հայր մեր որ''.

Դաւ աաա՛:

Օրհնեալ ես Հայր տն մերոյ յսի քսի · որ զմեզ

որդիս քո անուանեցեր մ-
կրտութ՟բ սբ՟ աւազանին. և
այժմ՝ անկեալ աղաչեմք
զքեզ տր՟՝ արժանաւորեա
միրկագործ սբ՟ խորհրդոյդ.
այն՟ զի լիցի ինձ 'ի քաւութ՟.
պարգևեա 'ի շնորհաց սբ՟
հոգւոյդ հալածել յինէն
զխաւար մեղաց. աղաչեմ
տր՝ տմ՟ կարօտելոյ անձել
զբարիս. վս՟ զի դու տէր՝
խոստացար մեզ որոց ար-
ժանաւորեսն, զկեանս. ևես
գոհութեամբ փառաւո-
րեմք զհայր և զորդի և զսբ՟
հոգին ամէն:

* «Բրահմանայն՝ ,, հաւատամ

հաւատամ''. Ձայն առ՛։

Ո՛վ երրորդութիւն և զմի ածութիւն հաւատամ զհայր և զորդի և զսբ հոգին ամէն։ Ճաւատով հաւատամ և երկիր պագանեմ անմահին ածոյ և արարչին ածմ եղականացս • որ զմարմնական մարմինս և զարիւնս ո՛չ խնայեցեր ի՛մ մերոյ փրկութե • այլ արժանի զանարժանս և ողորմեա ամէն ։

* Սարկաւագ''. „Երկնաւորն է հաւատով''. Ձայն առ՛։

Տէր իմ և ած իմ՝ մի՛ յիշեր զմեղս իմ, զի ո՛չ եմ

բաւական. ես ոչ՞ զմարդ-մեղաց. և դու ածցես թո-ղութիւն շնորհեա՛ :

Երգ հաղորդելոյ ձայն՝:

Ողորմեա ինձ բարի և տէր գթողի. 'ի պատուի-րանս քո փափագեցու-ցանեն ինձ:

* Յաւժանոյն ,, Կեցո՛ տէր զժողովուրդս քո''. Դառն ձայն՝:

Օրհնեալ ես Տէր Ճշմարիտ. որ արժանի արարեր զիս զանարժանս հաղորդել մար-մնոյ և արեան քում. և կեցուսցես զիս կեալ ժա-ռանգութ̃ քո, և զօրութ̃

քո բարձրացայց ՚ի վ̃ր թշ-
նամեաց իմոց . լցայց ՚ի բա-
րութենէդ քումմէ ո̃ր ճա-
շակմամբդ քո սբ̃յ . փառք
՚ի բարձունս կեն̃կրողէդ ո̃յ .
և այն ունիմ՝ զի և համապազ
հօգևոր օրհնութեդ կերակ-
րես զմեզ . և քեզ Ք̃ս ա̃ծ՝
փառք յաւիտեանս ամէն :

* Սարկ''. ,,Եւ եւս հաւատով
ընծայեսցուք''. Դաս ասէ՛:

Մեք որք ընկալաք արժա-
նաւորապէս զանմահ և զա-
նապական խորհուրդ սրբոյ
պատ̃րգին՝ զոհեդ մերմէ յէ
Ք̃սէ, գոհանամք և փառաբանեմք:

* Բաժա''. ,,Փոխանակ փշէն խրխտոո''. Դու տաս՛:

Բա՛ն Տէր՝ զքէն գոհանամ. որ արժանաւորեցեր զիս զա-նարժանս, այս մեծի շնորհացս. այլ և աղաչեմ զքեզ՝ զի սովաւ պահեսցես զիս ան-երկիւղ յամ կրից բանսար-կուին: Հովիւ բարի՝ որ ի՛ս հօտիդ քո զմահ ճաշակե-ցեր. և ո՛չ կամեցար լու-ծանել 'ի հօտէդ քումմէ. այլ արժանի արարեր զքեզ հետևելոյ Տէր իմ և տո՛ւր յա՛-՞քո՝ քեզ փառք յաւիտեանս ամէն:

※ «Բոհանայն ,, որ օրհնէ» զպայծառութիւն. Կոր. սաա՛:

Օրհնեմք զքեզ քս ած. և յուսացեալ կամք՚ի քեզ. զի և զմեզ կեցուսցես փառաւորել զծառայութիւն քո, պահեա՛ և հաստատեա՛ զսէր եկեղեցւոյ քո սրբոյ, կատարել զլրումն ողջունի քո. աղաչեմք և զմեզ փառաւորեա՛ յամ̃այնի զօրութենէդ քումն. մի՛ թողուր զմեզ տէր. աղաչեմք զքեզ տուր զքո խաղաղութիւնդ ամենայն եկեղեցեաց քոց և աշխարհի, և քհնյից

և մերոյ ամենաբարեպաշտ Թագաւորի (այս անուն), և ամ՟ Թգւրց քրիստոնէից և զինուորել մանկանցն նոցա . և ամ՟ ժողովրդեանս ։ Ամ՟ն զի ամ՟ բարի և պարգև 'ի հօրէ այ՟ 'ի քեզ կատարեալ համբերաւ. որդի այ՟ քս՟ ած՟ . քեզ փառք այժմ և յաւիտեանս յաւիտենից ամէն ։

* Բան". „ չափաւորութեան օրէնաց". Պօղոս առաք՛ ։

Բա՟ն որդի այ՝ որ կոչեցեր զօրէնս, և լցեր զամ՟ ասացեալս 'ի մարգարէիցն . լնլով զքոյին հայրական տնօ-

ընծուլեղ, լի՛ց և զմեզ հոգ-ւովդ քով սրբով. և քեզ փառք յաւիտեանս ամէն:

Աղօթք սրբոյն Յովհաննու Դամասկացւոյն, ասացեալ առ տէրն մեր յս քս ՚ի ժամ սուրբ պատարագին:

Գթածն ա՛յ տէ՛ր իմ և ա՛ծ յս քս. որ զենար ՚ի վերայ խաչին և բարձեր զմեղս աշ-խարհի: Մեղուցեալ ծա-ռայս և ծանրաբեռնեալս

յանցանօք մեղաց, անկեալ
աղաչեմ զքեզ տէ՛ր իմ և
աստուած իմ:

Ողորմեա՛ ինձ սուրբ ողորմե-
ցար համօրէն աշխարհի. զի
դու ես յոյս և լոյս աշխ̃րհի.
Ճանապարհ և ճշմարտութի̃
և կեանք: Օ մահացեալս
մեղօք և զանօրէնեալս յան-
ցանօք մի՛ անտես առներ տէ̃ր
իմ. այլ ողորմեա՛ ինձ ըս̃
ա̃մ անօրինական կոչյ՝
որոց տարար համբերութ̃
բազմաւ: Յիշեա՛ ամենա-
կեցոյց տէ՛ր՝ զիջումն քո՛ ՚ի
հայրական ծոցոյ. և զմարմ-
նանալն՚ ՚ի մէ̃ջ կուսէն մա-

րխամից ։ Յիշեա ամենօրհ-
նեալ տէր՝ զշրջիլն քո ոպս
զմարդ ՚ի մէջ մեղաւորաց
մարդկան ։ Յիշեա ամենե-
ցունց սբ տր՝ զմկրտիլն քո
՚ի յորդանան ՚ի յոհաննէ ։
Յիշեա ամենագէտ տէր՝
զհայհոյանսն ՚ի դպրացն և
զփորձանսն ՚ի փարիսեց-
ւոց ։ Յիշեա յառաջա-
տե՛ս տէր՝ զմատնելն ՚ի
յուդայէ և զքամահելն ՚ի
քահանայիցն ։ Յիշեա ա-
մենօրհնեալ տր՝ զըմբռնելն
՚ի պարտիզին և զձեռնակա-
պելն ՚ի խուժանէն ։ Յիշեա
ամենակարող տէր՝ զկապն

առաջի կայիափայի և զհար-
ցուածն ՚ի յաննայէ։ Յիշեա՛
անոխակալ տէ՛ր՝ զապտակն
և զկատակն ՚ի կատաղեացն։
Յիշեա՛ արքայ արքայից՝
զկապանօք կապելն ՚ի յա-
տենի պիղատոսի և զդատելն
՚ի նմանէ։ Յիշեա՛ երկայ-
նամիտ տէ՛ր՝ զթուքն յեբ-
րայեցւոյ· և զծեծն եղե-
գամբ։ Յիշեա՛ անմնուայ տէ՛ր
և լոյս՝ զքղամիդն կարմիր և
զպսակն փշեղէն։ Յիշեա՛
անյիշաչար տէ՛ր՝ զժամն զայն
յորժամ՝ բարձեր զխաչա-
փայտն կենսաբեր յուսոյդ։
Յիշեա՛ բարձրեալ՝ զբարձ-

րանալդ քո՛ 'ի մեր կենսաբեր
սրբ. խաչին, և զպատարագեալն
բևեռօք: Յիշեա՛ մի՛ մո-
ռանար զպապաքումն ծարա-
ւոյն՝ զճաշակ լեղւոյն և ըղ-
քացախոյն: Յիշեա՛ մի՛ մո-
ռանար զձայնն էլի էլի, և
զխոցումն 'ի զինուորէն:
Յիշեա՛ մի՛ մոռանար զհո-
սումն վարդագոյն սբ. արեա-
նըդ, և զխոնարհին անձկեալ
գլխոյդ: Յիշեա՛ կենդանիդ
յաւիտենից՝ զթաղումն ե-
րեքօրեայ, և զյարութիւնդ
ածային, և զհամբարձումն
հրաշափառ: Յիշեա՛ յիշա-
տակդ յաւիտենից՝ զկորու-

սեալն · քանզի վասն մեղա-
ւորայս յանձն առեր զայս
ամ՛ ամենազութդ տէր ։
Որդ՝ զայս ամ՛ ունիմք առ
քեզ միջնորդ և բարեխօս ։
Բազում՝ ողորմ՝ ողորմեա՛
ինձ · և թող զամ՛ յանցանս
իմ · սրբեա՛ 'ի մեղաց · ազա-
տեա՛ յամ՛ վշտաց դժնէից ·
և տուր ինձ տեղի յարքա-
յութեան քում · զի դու ես
մարդասէր տր · և քեզ վա-
յելէ փառք իշխանութի և
պատիւ · այժմ և միշտ և
յաւիտեանս ամէն ։

## Աղօթք վս տն աշխարհի :

Շնորհեա՛ տր զսէր զհաս-
տատուն և զըղձալի զխա-
ղաղութին տմ՝ աշխարհի ՚ի
ձեռն որբ և անմահ պտղի,
որ քեզ տեառն այ մերոյ
մատուցանեն վս փրկութե
մերոյ : Ակնկալեաց մերոյ
շինութիւն և հաստատուն·
շնորհեա՛ ուղղափառ եկղյ
ուղիղ դաւանութն : Հայրա-
պետաց ընդ երկայն աւուրս
՚ի վերակացութն· կրօնաւորց
վարս սրբութե · քահանայից՝
սարկաւագաց՝ և բնաւին ե-
կեղեցականաց , բոլորապա-

տեան ուղեղնացութեան ։ Թագաւորաց քրիստոնէից և մանաւանդ ամենաբարեպաշտ Թագաւորի մերոյ (այս անուն), յաղթութի՛ւն 'ի վե՛ր հեթանոսաց` և 'ի միջի իւրեանց սէր և միաբանութի՛ւն ։ Շնորհեա՛ իշխանաց կարողութիւն . զօրավարաց համարձակութի՛ւն և զօրութի՛ւն . և համօրէն ժողովրդականաց ունկնդրութի՛ւն սբ̃ եկեղեցւոյ` և պատուիրանաց պահպանութի՛ւն. կանանց պարկեշտութի՛ւն. կուսանաց և աղախնեաց արթնութի՛ւն 'ի վարս սրբուե ։ Ճանապարհորդաց ուղ-

նորդումն և խաղաղումն · նա-
ւելոց նաւահանգիստ և
հանդարտումն · և որք կան 'ի
պատերազմունս զինուորքն
մեր՝ յաղթող 'ի մէջ հեթա-
նոսաց արտաքսես վնաս ։

Շնորհեա՛ մեզ և օդոց զբա-
րեխառնումն · անդրոց քաղա-
քերութիւն · և պտղոց ամ՝
առատութիւն · պատեհաւոր
փոխմանականաց յաջորդումն ։

Շնորհեա՛ մեր հիւանդաց
առողջումն · վշտացելոց բը-
ժշկութիւն · տարակուսելոց
ցնծումն · անձկական ողջե-
լումն · մեծատանց և աղքա-
տաց առատ ողորմութիւն ·

անդ արձ մեղաւորս զըղջումն և ապաշխարութ̅ին և մեղաց քաւութ̅ի։ Ի չարեաց փրկեա՛. ՚ի մեղաց պահեա՛. ՚ի գործս բարիս առաջնորդեա՛. և ընտանեաց մերոց մեծաց և փոքունց՝ արանց և կանանց՝ ծերոց և տղայոց, անսպառ ողորմութեան պարգևեա՛։ Եւ օգնեա՛ տէր ծառայից քոց ՚ի բազմապատիկ շա-հաւորու̅եց. ՚ի պատիւ և ՚ի փառս տ̅րու̅է քո. բայց զա-մենաբաշխ ձեռն քո. և լից զամենեցուն կարօտութ̅ի։ Արձակեա՛ տ̅ր զկապեալսն. ազատեա՛ զգերեալսն. դար-

ցո՛ զխախուցեալսն · ժողո-
վեա՛ զցրուեալսն · մխիթա-
րեա՛ զնեղեալսն : Բա՛րձ
զլուծ ծանրութե՛ 'ի քրիստո-
նէից · որք կան անկեալ 'ի
ձեռս անօրինաց · Նամբո՛
զպլասեռս 'ի պարանոցէ
ծառայից քոց · և զպետութի՛ն
ամենեցուն խաղաղ նահան-
ջեա՛ : Արագ ժամանեա՛ 'ի
պէտս հոգւոյ և մարմնոյ ·
ամենեցուն որք կարդան զանուն
քո սուրբ : Հալածեա՛ զսա-
տանայական որոգայթս և
հերքեա՛ զխաբէութի՛ն նորա :
Փրկեա՛ զստեղծուածս քո
'ի սրոյ , 'ի սովոյ , 'ի ջրոյ ,

և ՚ի հալածչաց թշնամեաց ։ Խնդրեմ զցասումն քո ՚ի մէնջ. և յիշեա՛ զի գործ ձեռաց քոց եմք ։ Յիշեա՛ տէր և ողորմեա՛ մեզ մեղաւորացս, որք կամք առաջի տաճարիդ քո . և պատուական մատուցա- ղաց պարգևեա՛ զկեանս և զօգտակարս խնդրուածոց ։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛ ուխ- տաւորաց և պտղաբերից ե- կեղեցւոյ քում սրբոյ . և որք յիշեն զաղքատս ողորմութն ։ Եւ բարերարաց մերոց, որք մեզ այց առնեն հասո՛ նոցա զվարձս նոցին, ըստ ընդա- բոյս առատութեն քո հարկ-

րաղատիկ ասա և 'ի հան-
գերձելումն ։ Յիշեա՛ տէր և
ողորմեա՛ և գթա՛ 'ի հոգիս
հանգուցելոց․ որ վասն նոցա
պատարագս մատուցանի․
հանգո՛ զանձինս մեծաւ այ-
ցելութեամբ 'ի լոյս երեսաց քոց։
Յիշեա՛ տէր ընդ նոսին զամենայն
հոգիս ննջեցելոց մերոց,
որք 'ի պատերազմունս սրով
կոտորեցան․ և որք 'ի գե-
րութեան և 'ի բանտի ննջեցին․
որք 'ի բնակութենս և յամենայն
տեղիս․ 'ի յանապատս և 'ի
ձանապարհս վճարեցին ըղ-
կեանս իւրեանց․ և որք տա-
րաժամ մահուամբ 'ի ցաս-

մանէ քումմէ ննջեցին. և որք ո՛չ կարացին խոստովանիլ և ապաշխարել զմեղս իւրեանց. թո՛ղ տ՛ր ամենեցուն զյանցանս նոցա. լուսաւորեա՛ և դասաւորեա՛ ընդ սրբս քո յարքայութեն երկնից. և արժանի արա՛ ողորմութեան քում:

Յիշեա՛ տէր և զհօգիս ծնողաց մերոց: Յիշեա՛ տ՛ր զամ հօգիս ննջեցելոց և զարեն մերձաւորս մեր. և ողորմեա՛ մեծաւ այցելութեամբ ՚ի լոյս երեսաց քոց:

Յիշեա՛ տ՛ր և զհիւանդս և զպատարագս մատուցողս.

և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

## Աղօթք

ԱՌ ՔԷ ՍՈՒԾՆ ԲՆԻ:

Պսակէ անհասանական գըլխոյն մե-ջին • միջնորդ փրկուե մե-րոյ և դրաւ տէրգէրայ • ձա-ռագայթ յաւէտ • լոյս աշ-խարհի • և արեգակն ար...ոյ • և պայծառան լուսոյ • նշան

ուէ և սոսկալի երախտեայն
ից առ մեզ. սուրբ ածմուխ
սպանող հակառակամրտին
մերոյ, և դրօշմ զգայարա-
նաց մերոց. և ամուր ապաս-
տան աննկալութե մերոյ:
Լ՛ծայրն զօրութ քո՝ որ պա-
հէ հաստատուն զհիմունս
աշխարհի, պահեսցէ զհոգի
և զմարմին իմ՛ ՚ի ցասմանէ՝
՚ի ցանկութենէ և յատե-
լութենէ. և յամ՛ փորձու-
թեանց, և ՚ի դայթակղու-
թենէ հոգւոյ և մարմնոյ.
՚ի փառս սոսկալի զօրութե
քո. յաւիտեանս յաւի-
տենից ամէն:

Աղօթք առ հայրն երկնաւոր ։

Արարիչ բոլորից տէր՝ գթա՛ 'ի մեղայեալս և ողորմեա՛ անկելոյս առաջի քո ․ սպասեա՛ զվէրս իմ, բժշկեա՛ զհիւանդութիւնս իմ, սրբեա՛ զաղտեղութիւնս իմ, նորոգեա՛ զհնացեալս, լուսաւորեա՛ զխաւարեալս ․ վասն զի ամենագութ ես և ողորմած ․ քաղցր և բարերար ․ մարդասէր և ամենախնամ ․ յաճախագութ և ամենողորմ ․ երկայնամիտ և անյիշաչար ․ ամենակարօղ և անապական ․ սրբութիւն և արժանաւոր

մաքրութիւն. ո՛չ բաւեմ ասել մեղսալից բերանովս զանձառ քո գովութիւնս. բայց միայն 'ի սակաւուց: Այլ ապաւինիմ 'ի քո անձառ գթութիւն. և աղերսեմ և ողբերգական ձայնիւ գոչեմ. և խնդրեմ զողորմութիւն և զանյիշաչարութիւն 'ի բարերարէդ. գիտեմ ամենեւին զի ամօթալից եմ. և ո՛չ ունիմ համար զմեղացս՝ որ շուրջ պատեցան զինև յամ զգայութիւնս, մեղանչելով և վարանելով 'ի հոգս և 'ի ծուփս 'ի զբաղանս և 'ի դատարկութիւնս և յամ աշխ

ազդէ մնասս։ Այլ ո՛վ
անբաւութեան խորոց կամաց
անհասանելդ, ներեա՛ և մար-
դասիրեա՛ և սահմանեա՛ ա-
պաշխարութեան տեղի. զքա-
նանացւոյն այժմ գոչեմ ըզ-
ձայն՝ առաջի և զկնի աղա-
ղակելով. ողորմեա՛ մար-
դասէր կուրացեալ հոգւոյս.
շնորհեա՛ ինձ ՚ի վեր հայել
թախանձագին, և աղերսա-
լուր ըղձմամբ սրտիւ ՚ի խո-
րոց կամաց հոգւոյս գոչեմ
զանսուալէն՝ ՚ի լուր ածյին
խնամողդ. քաղցր ականջք
հայեսցես ողորմած ած
քանզի ՚ի զանազան և ՚ի

բազմօրինակ մեղաց անկեալ
և լուծեալ կամ. և ակնար-
կեմ դողմամբ սրտիւ, ո՛չ
ունելով զոք կարեկից:
Ո՛արտարապետ քաղցր բը-
ժիշկ՝ հրամայեա՛ հաստա-
տել անդամոց իմոց. զի
անբաւ է գթութիւն ծայրին
սիրոյդ. ողորմեա՛ ողորմու-
թեանց աղբիւր՝ և ներեա՛
յամի երկայնամիտ. Թո՛ղ
որ առատդ ես՚ի պարգևել.
որբեա՛ զվէրս և զհարուածս
խոցելոյս՝ որ սրբութիւնդ
ես գերակատար. ջնջեա՛
զյանցանս իմ և զսխալանս՝
որ ամենակարողդ ես. ա-

ողջացո՛ զբազմամեղ հի-
ւանդութիւն հոգւոյս՝ որ
իշխանդ ես կենաց և մահու,
որ 'ի բարձրութիւնս երկ-
նից նստիս, կանգնեա՛ զիս
'ի գլորմանէ մեղաց, որով
գայթակղեցայ ընդ միտս
կենցաղս. արտասուագոչ
ողբերգութ. և կորացեալ
պարանոցաւ հեղում առա-
ջի անոխակալ բարերարիդ
զթ շուառացեալ մեղսաթա-
ւալ մարմնս, որով ո՛չ
զանգիտեցի 'ի հրամանաց
քոց. աղաչեմ արա՛ առ իս
ըստ ողորմութեանդ 'ի ննջել
սրտիս և 'ի հեղձամղձուկ

լինիլ մնայս զի ոչ ժուժեմ վշտիս. խնդրեմ՝ պաղատիմ՝ հայցեմ՝ առաջի անկանիմ՝ աղերսեմ՝ ողողանիմ, Թո՛ղ տ՟ր, գթա՛ տ՟ր, խնդրեմ տ՟ր, Ներեա՛ տէր, քաւեա՛ տէր, փրկեա՛ տէր, օգնեա՛ տէր, պահեա՛ տէր, ամրացո՛ տէր, կարողացո՛ աղաչեմ, զօրացո՛ յոյս իմ, ապրեցո՛ ա՟ծ իմ, արժանացո՛ տ՟ր իմ, զերծո՛ 'ի պատժոց դատաւո՟ր իմ, պարգեւեա՛ տ՟ր, հաստատեա՛ տ՟ր յերկիւղ քո եւ 'ի սէր, առաջնորդեա՛ 'ի պատուիրանս քո. Նաւավարեա՛ 'ի ծովու

աշխարհի․ տարակուսեցայ
՚ի ցնորմանց, դայթակղե-
ցայ ՚ի պէս պէս ննոտխս․
մոլորեցայ ՚ի ճանապարհէ․
խոտորեցայ ՚ի մ̅ղ շաւղաց․
անկայ և գլորեցայ, այժմ
հաւատով և յուսով առ
արարիչդ ապաւինեցայ․ ո-
ղորմեա՛ ին̅․ յարո՛ և կո-
չեա՛ առ քեզ․ և քեզ
փառք ընդ որդւոյ և սուրբ
հոգւոյդ․ այժմ և միշտ և
յաւիտեանս ամէն։

Աղօթք սրբոյն Յովհաննու Պռաւնեցւոյ ասացեալ ՚ի դէմս Որդւոյն Միածնի։

---

Որդի Ա՜յ Ա՜ծ Հզօրիտ, որ վ՜ս մերոյ փրկութե՜ մարդկան, եղեր որդի մարդոյ, որդի Ա՜յ. որ վ՜ս անհաս մարդասիրութե՜ քո խոնարհեցար յանձնառ փառաց քոց. և եկեալ ՚ի խնդիր կորուսեալ պատկերիս քո տանս ադամայ. և ընդ տնօրինական կրից քոց արարեր փրկութիւն ՚ի մէջ երկրի. և ազատեցեր ՚ի ծառայութենէ մահու և մեղաց. և հրաւիրեցեր ըն-

հողեղէնս յարդարումն և 'ի
փառս քո. և արարեր հա-
ղորդ և ժառանգակից ըդ-
մահկանացու բնութեանս
երկնայինն անմահական փո-
րայն. և արդ ով յս քս ած
իմ՝, որ զայս ամ՝ մարդասի-
րապէս շնորհեր յօրինեցեր.
մի միայն ես եղեց զրկեալ
'ի ձրի ողորմեացդ ի՛ս ծուլա-
ցեալ մեղաց իմոց. մի միայն
ես ունայն գտայց յարդարմն
փրկութենէդ, ի՛ս բանից
յանցանաց իմոց. այլ ամ
եկեր 'ի խնդիր կորուսեալ
ոչխարին, և գտեալ՝ ուսօք
բարձեր. լեր և ինձ խնդրող

կորուսելոյս. և զոր օրինակ ողորմեցար ։քանանուհւոյն և զհայցուածն կատարեցեր. կատարեա և զիմ հայցուածըս որ ի՟ս մեղաց իմոց պաղատիմ. և որպէս սրբեցեր բանիւ բերանոյ քո զբորոտըն, սրբեա՛ և զիս յամ ախտալանաց իմոց. և զոր օրինակ զանդամալոյծն առողջացուցեր, առողջացո՛ և զիս զչարեօք լցեալս. և ոպ՟ս զհիւանդան բժշկեցեր, բըժշկեա՛ և զիս զցանկութ՟ն հիւանդացեալս. և զոր օրինակ զդեւսն 'ի մարդկանէ հալածեցեր, հալածեա՛ և

յինէն զթշնամին կենաց ի-
մոց . և ոսկի զկտրմն լուսա-
ւորեցեր , լուսաւորեա՛ և զիս
զխաւարեալս մեղօք . և զոր
օրինակ զմեռեալսն յարու-
ցեր , յարո՛ և զիս զմահա-
ցեալս յանցանօք . և որպէս
ալեաց ծովուն սաստեցեր ,
սաստեալ հանդարդեա՛ և
զալիս մեղաց իմոց . և զոր
օրինակ զսովեալսն յանա-
պատին կերակրեցեր , կե-
րակրեա՛ և զիս զճշմարիտ
սովեալս յառատ ողորմու-
թենէդ քումմէ : Տէ՛ր յս
քս ած իմ . որ զմեզ մար-
կամիս կեալ և գալ ՚ի գի-

տութեան ճշմարտութեան. ուսուցի և զանձն քո ետուր փրկանս փոխանակ բազմաց. յիշեա՛ զիս և ողորմեա՛ ինձ:

Տէ՛ր Յս Քս Ած իմ, վասն իջանելոյ քո ՚ի հայրական ծոցոյ անճառ ծննդեանն ՚ի սրբուհւոյն, խանձարրօք պատելոյն, ՚ի մսուր դնելոյն, կաթամբ կերակրելոյն, բազկօք բառնալոյն, գրկօք գրգուելոյն, շրթամբք հոգեղէն համբուրելոյն, և ՚ի տաճար ընծայելոյն՝ յիշեա՛ զիս և ողորմեա՛ ինձ:

Տէ՛ր Յս Քս Ած իմ, վասն ՚ի յորդանան մտանելոյն, ՚ի

յովհաննէ մկրտելոյն, իջա-
նելոյ սբ̃ հոգւոյն, ՚ի հօրէ
վկայելոյն, և ՚ի յանապա-
տի փորձելոյն՝ յիշեա՛ զիս և
ողորմեա՛ ինձ։ Տէր յս̃ քս̃
ա̃ծ իմ, վասն ա̃ծահրաշ
սքանչելագործելոյն, զմեղան
թողլոյն, զնեղելոյն բժշկե-
լոյն, զմեռելոյն յարուցանե-
լոյն, զա̃ծութ̃ն յայտնելոյն՝
յիշեա՛ զիս և ողորմեա՛ ինձ։
Տէր յս̃ քս̃ ա̃ծ իմ, վասն ՚ի
վերնատանն բազմելոյն՝ զա-
ռաքեալսն լուանալոյն, զնոր
ուխտ ս̃րբին հաստատե-
լոյն, և ՚ի յուդայէ մատնե-
լոյն՝ յիշեա՛ զիս և ողորմեա՛։

Տէ՛ր յս՛ քս՛ մի՛ խուժանին հրէից զքեզ ըմբռնելոյն, կապելոյն՝ ձորձապատելոյն՝ հարկանելոյն՝ հայհոյելոյն՝ կռփելոյն՝ ձաղելոյն՝ ծեծելոյն՝ թքանելոյն՝ և այպ անելոյն, յիշեա՛ զիս և ողորմեա՛ ինձ:

Ա՛ռ ՚ի յատենին քո կալոյն՝ ՚ի դատաւորէն դատելոյն՝ ՚ի հերովդէէ հալածակորձելոյն՝ ՚ի դպրացն դորոլելոյն՝ ՚ի քահանայիցն կշտամբելոյն՝ ՚ի ժողովրդոցն պարսաւելոյն՝ և ՚ի զինուորացն փարելոյն, յիշեա՛ զիս:

Առն կենսատուեր փայտին

բառնալոյն՝ 'ի գողգոթա
կանգնելոյն՝ կամաւոր բար-
ձրանալոյն՝ և հեղլուսնուք
բևեռելոյն, յիշեա զիս և
ողորմեա ինձ. ո՛վ յիսուս
քրիստոս ա̃ծ իմ։

Վասն ա̃ծխառն մարմնոյդ
մե՛րկանալոյն՝ կարմիր քղա-
միթով զարդարելոյն՝ հան-
դերձից բաժանելոյն՝ և
փշովք պսակելոյն, յիշեա
զիս և ողորմեա ինձ տ̃ր յ̃ս։

Վ̃ն քրտնաջան ծանուելոյն՝
լեղի և քացախ ճաշակելոյն՝
մեծաձայն առ հայր կար-
դալոյն՝ զէլի էլի գոչելոյն՝
և ա̃ծեղէն հոգւոյդ աւան-

ղենլոյն, յիշեա՛ զիս և ողոր-
մեա՛ ինձ տ̃ր յ̃ս ք̃ս ա̃ծ իմ։
Վ͞ն 'ի խաչէն իջանելոյն՝ 'ի
յուղէփայ պատատուակելոյն՝
'ի գերեզմանի թաղելոյն՝
մատանեաւն կնքելոյն՝ զդ-
ժոխս աւերելոյն՝ 'ի մե-
ռելոց յառնելոյն՝ զաշա-
կերտացն օրհնելոյն՝ և մա-
ռօք առ հայր համբառնա-
լոյն, յիշեա՛ զիս և ողորմեա՛
ինձ տ̃ր յ̃ս ք̃ս ա̃ծ իմ։
Մի՛ ըստ գործոց իմոց հա-
տուցաներ ինձ. մի՛ մերժեր
զիս յողորմութենէ քում-
մէ, մի՛ մատներ առներ
զգործս ձեռաց քոց և մի՛

զրկեր զիս յերանաւէտ խոստմանց քոց ։

Մի՛ մոռանար յողորմութենէ քումմէ և առաքեր զիս ՚ի տանջանս յաւիտենականս ․ այլ յիշեա՛ զիս և ողորմեա՛ ինձ տէ՛ր , և մի՛ տոչորեր զիս հրեղէն տապակօքն ․ մի՛ գանեսցես զիս գեհեննոյն , և մի՛ ընկեցես ՚ի մէջ խմ̃ գբոյն բորբոքեալ ։

Յիշեա՛ , յիշեա՛ , յիշեա՛ յիշատակդ յաւիտենից տէ՛ր յս̃ քս̃ ած̃ իմ ․ և նայեա՛ առ իս քաղցրութբ̃ ․ և փառ̃ փառաց երեսաց հօր , և մի̃ փառակցութե̃ հոգւոյդ սբ̃յ ։

և մ՜ս սիրոյ՝ և բարեխօսութ՜ե
սրբոյ ա՜ծածնին , և ամ՜ սրբ՜ց
քոյ երկնաւորաց և երկրա-
ւորաց , ազատեա՛ զիս յան-
ներելի տանջանացն՝ և ՚ի
դատ՜ն մշտայ գեհեննին . և
արա՛ զիս արժանի երկնից
արքայութ՜եդ . և քեզ ընդ-
հօր և սուրբ հոգւոյդ փառք
իշխանութ՜ի և պատիւ յա-
ւիտ՜ենս յաւիտենից ամէն ։

Պաղատանք
առ Հոգին սբ ած ճշմարիտ :

---

Անքննելի և բազմազան
շնորհաց առատատուին մատա-
կարար և բաշխիչ Հոգի սբ,
Հոգի ճշմարտութե, Հոգի
ելող 'ի Հօրէ, Հոգի մխի-
թարիչ ած ճշմարիտ . ամե
արարիչ ընդ Հօր և ընդ-
որդւոյ . և ամենայնի Նախա-
խնամութբ քով բերող զամ
որ ըստ կամաց քոց տնօրէ-
կանաց բաժանես ըստ իւ-
րաքանչիւր չափոյ Հաւա-
տոյ . նաև առ 'ի քէն զա-
ռատաՀոս շնորհաց պայծա

ւրս, և անճառելի գթութ
եանց .քո ամենազան բարու-
թեամբք հաստատացուցեալ
բարերարէս. Ձախողացուցանես
զեկեղեցի .քո, առաքելովք`
մարգարէիւք` վարդապետօք`
և այլովք դասիւք արժա-
նացելովք ածայնոյ պարգե-
ւաց .քոյ. յորում եղեր
գթողուն մեզ վստահու-
թեան և տկարութե մերոյ
բնութես. մարդասիրապէս
ետուր զօրութին մերատին
ողջոյն և կենդանւոյն` ի
մահուանէ մեղաց. Հայեա՛
.քաղցրութբ .քով ամենա-
գութ և յիս անարժան ծա-

ռայս քո. և տուր ինձ սիրտ
բեկեալ և հոգի զղջման.
զօրացո՛ զլքումն մտաց ի-
մոց. և հալածեա՛ զանյու-
սութեան ստուեր հոգւոյ
ծառայի քո. և մեծութի՟
ողորմութե՟ քո զպակասութի՟
անօրէնութե՟ իմոյ, որ հալ-
կանէ ցանկ զիս տանջեալ
անբժշկականաւ խղձիւ.
քաւեա՛ բարերար տծ՟՝ ըզ-
տիղմ անառակութե՟ գործոց
իմոց. լուա՛ ամենասուրբդ՝
և՚ի գլորմանէ մեղաց կանգ-
նեա՛. զխաւար նորա հալա-
ծեա՛. զվէրս առ՚ի նմանէ
անձին իմոյ բժշկեա՛. ըզ-

պատճառս չարեաց խռովք նենգութիւնքն, և զնորին պատրանս խաբէութեան նորա մերժեա՛ յինէն, և զհաւանութիւն անմտութեան խնդրոյ անտես արա՛ և մի՛ յիշեր։ Մեծապէս անօրինեալ ցասուցի զկամս քաղցրութեան քո, և ոչ իշխեմ համարձակապէս մատուցանել զաղաչանս առաջի քո, յիշելով զոր ինչ գործեցի. գուցէ անարժան գոլով և ի աղտեղութեք դառնացացից միւսանգամ զամենաւէտ կամս քո. բայց նեղութիւն տարակուսանաց անձին խնդ և անհրաժեշտ երկիւղ մը-

ըէժ խնդրուէն՝ լինել կալ
առաջի քո հարկեցուցանէ ։
Անուանդ անխափանելի քաղ-
ցրուն քո. և անեզրական
սիրոյ վստահուն. և արդ՝
ողորմած տես ո՜րքան պէտս
ունիմ մարդասիրուե քում.
և հայեաց ո՜րքան սաստիկ
են վէրք անձին իմոյ թշուա-
ռացելոյ ։ Ատեր խնամար-
հութեամբ կարողդ յամի,
բժշկել զանբժշկելի հար-
ուածս անձին իմոյ, քանզի
հնարաւորք են քեզ անհը-
նարինք. և ո՛չ կարէ կալ
առաջի լուսոյ քաղցրութե
քո՝ խաւար ատելի վարուց

իմոց · և տեղի տամ վէրք նեխեալ հոգւոյ իմոյ բժշկական զօրութեն քո մեծի · որոյ գոհութեամբ փառաւորեմ զքեզ ընդ հօր և ընդ որդւոյն միածնի այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն:

Աղօթք առ սբ Ածածինն:

Ով ամենասրբուհի Ածածին պարծանք կուսութեն · ճրագ պայծառագոյն քան զարեգակն: Ով ջահ փայլուն քան զլուսին և զաստեղս: Ով աթոռ քերովբէական բարձրագոյն քան

զիրկս։ Ո՛վ սերովբէ հո-
գեղէն վեհագոյն քան ըզ-
հրեշտակս և պատուակա-
նագոյն քան զանմարմին
դասս երկնաւորաց։ Ո՛վ
պարծանք կուսանաց և փառք
ամուսնացելոց։ Դու ես
հարսն անսկզբնականին ։
Դու ես մայր մարմնացելոյ
միածնի որդւոյն աստուծոյ։
Դու ես բնակարան հոգ-
ւոյն սրբոյ։ Քև հաճեցաւ
ած ընդ մարդկային բնութեն
որ մեղաւ։ Քև բացաւ
փակեալ դուռն դրախտին։
Քև օրհնեցաւ երկիր յա-
նիծից նախահօրն։ Քև

անկեցաւ քաղցրութիւն և ճշմարտութիւն յերկրի : Դու ծանեաք զաստուած : Դու անուանեցաք քրիստոնեայք : Դու ընկալաք զպաշտպանութի՜ ՚ի թողութիւն մեղաց : Դու միայն տուաւ համարձակութի՜ բարեխօսել վասն ազգի մարդկան :

Ո՛վ որովայն ա̃ծակրող մայր ա̃ծածնող : Ա̃ծաշօշափ ձեռըն. ա̃ծահանգիստ գիրկ.ք. ա̃ծադիեցստինք. ա̃ծաբարձ բազուկ.ք. ա̃ծմերձ բերան. ա̃ծահամբոյր շրթունք. աստուածահայեաց աչ.ք. ա̃ծախօս լեզու . ա̃ծընկալ խո-

բան. Ամայնեալ տաճար։ Մի՛ մոռանար զխոստովանողս քո, որք քեւ փառաւորեն զհայր և զորդի և զսբ հոգին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

---

## Աղօթք Ներսէսեայ Հայրապետին Հայոց Շնորհալւոյն։

Առաջնորդ կենաց և ճանապարհ ճշմարտութեան Տէր մեր Յս Քս. որ առաջնորդեցեր յոլովելոյ յեգիպտոս, և խորտակեցեր զփածունն կարմիր, և մխեցեր 'ի լերանն սինէականն, և ժողո-

փրդեանն յերկիրն պարգե-
ւաց, եւ կղէօպասանիցն ճա-
նապարհակից եղեր յեմմա-
ուս ։ Աղաչեմ զքեզ տէ՛ր
առաջնորդեա՛ ինձ եւ եղե՛ր
իմ՛ց գնալ խաղաղութ՟ զա-
ռաջիկայ ընթացս · փրկեա՛
յերեւելի եւ յաներեւոյթ թշ-
նամւոյն · եւ բարի առաջ-
նորդեա՛ ՚ի դէմ եղեալ
տեղին · զի դու ես ճանա-
պարհ եւ ճշմարտութիւն եւ
կեանք մեր · եւ քեզ վայելէ
փառք իշխանութի եւ պատիւ
այժմ եւ միշտ եւ յաւիտենս
յաւիտենից ամէն ։

### Աղօթք սրբոյն Յովհաննու Դամասկացւոյ ասացեալ վասն Միաշաբաթի աւուր:

Լոյս աշխարհի և ճառագայթ իմանալի տէր իմ յս̃ քս̃, որ յայսմ աւուր առեղծեր զլոյսն և հալածեցեր զխաւարն. լուսաւորեա զխաւարեալ խորհուրդս և զմըթոլ ծածկեալ միտս. բայց զառլղածեալ առագաստ զգայարանիս. և ծագեա առ ծառայս անպիտան զշող ճառագայթից քոց: Փառքդ անպատում՝ որ փարէիր ՚ի վերայ անհուն համասփիւռ

Ջրոցն՝ փայլեցո՛ առ փառա-
քիս զխաւարս լոյս. սրբա-
րար · մաքրեա՛ ՚ի մեղաց
զբազմամեղս և սրբեա՛ ան-
տաճարն անձին իմ՝ և ած իմ.
որ յայսմ աւուր կոչեցեր
զլոյսն տիւ. և զխաւարն գի-
շեր · զգիշեր մեղաց իմոց և
զխաւար անօրէնութե իմոյ
հերքեա՛ և հեռացո՛ յինէն:
Ո՛վ դու որ գթած և մար-
դասէր որ յառաջ քան ըզ-
լինելն երկնի և երկրի, պատ-
րաստեցեր զարքայութիւն ՚ի
սկզբանէ ինձ քո · արա՛ և
զիս արժանի լինել նորին վա-
յելել. համենայնօք ան-

րութիւնդ յաւիտեանս յաւիտենից ամէն :

## Նորին աղօթք երկուշաբաթու աւուրը :

Ով ամենակալդ և ամենակարող որ իմ և ած իմ, որ յայսմ աւուր քո ամենազօր և բարձրագոյն բանիւդ բաժանեալ անջրպետեցեր զբազմութիւն ջուրցն ընդ երկուս . և անշուշտ ամրութ սահմանեցեր զհաստատութիւն երկնից : Ընկալիր առաջի քո՝ և աղաչեմ ըզքեզ, սոսա բանիւք այդուիկ առ իս, թէ՝ թողեալ

լոյսն քեզ մեղք քո ըզկում․
քանզի անօրէնութիւնք իմ՝
բարձրացան քան զգլուխ
իմ՝․ և բազմու՟ն յանցանաց
իմոց ծածկեաց զիս․ չէ՛ք
չար 'ի չարեաց չարաւորին ,
և ո՛չ դոյ թիւ թաղձեալ
անօրինին․ մեկնեա՛ յինէն
զյանցանս իմ՝ տէ՟ր , և ան-
ջրդեղեալ վերայս՛ զմէջս
մխիթարել ծառայիս․ արա՛
արժանի զանպիտան ծառայս
երկնից արքայութեան ընդ ամ՟
սուրբս քո․ զի ընդ նոսին
փառաւորեսցուք զՀայր և
զՈրդի և զՍ՟ Հոգին․ ամէն ։

## Նորին աղօթք Էջմիածնի տաճարի :

---

Աներքին վայելչութեանդ
վերանորող , և սորբայնողս
սաեղծող ո՛գ իմ և ա՛նձ իմ .
որ յայսմ աւուր Հրամայե-
ցեր անբաւուն ջրոյն ժողո-
վել ՚ի ժողովս խորեանց .
յորում երևեցաւ ցամաքն
համդերձ ընթերողքոջ բու-
սօք և ծնկօք և ամ բարի
պտղօք յազգս խորեանց :
Ընկալնիմ առաջի քո և
խնդրեմ ՚ի քէն Թարշա-
մեալս ՚ի հողոյ ծաղկայն .
և անպտուղս ՚ի բարի ար-

դատեայն . հայեա՛ց 'ի բը-
տեղծուածս անձեղ մա-
տանցդ , և զգործս անձին
ձեռացդ մի' անտես առներ.
այլ նախախնամականն սիրո-
վըդ՝ խնայեա՛ 'ի խախտեալս
և 'ի սասանեալս մեղօք.
զի նետք նենգաւորին խո-
ցոտեցին զիս , և հարան յիս
փուշք բանսարկուին , վի-
րաւորեաց զիս վիշապին ահա-
գին . և թոյնք մահաբեր
զարմանին թարեցան 'ի մի
իմ . չէ՛ ուստեք փրկութի և
ո՛չ գայ բժշկութի հոգւոյ
իմոյ : Արդ՝ հայցեմ աշե-
նաւոր յամենազօր տէրու-

Թենէդ բժշկեա՛ զհեկեալ
ոգւոյս, և պատեա՛ մնորդա-
ւէր ո՛ր զկարէ վէրս. և որպ՟
այսօր որոշեցեր զջուրն 'ի
ցամաքէն, նոյնպ՟ որոշեա՛
յինէն զամ՟ անօրէնութիւնս իմ,
և արժանի արա՛ երկնից ար-
քայութեանդ ընդ ամե-
նայն սր՟ս քո. փառաւո-
րեմ զամենազօր տէրութ՟դ.
այժմ և միշտ և յաւիտեա-
նս յաւիտենից ամէն:

## Նորին աղօթք հրեշտակապետաց տօնին :

Ամենակալ առաջի քո և աղաչեմ զքեզ տր իմ և ած իմ. անճառ ճառագայթ. և անհասանելի լոյս՝ և լուսեղինաց դասուց յօրինիչ, և լուսաւորացդ երկնից ստեղծող երրորդութիւն սուրբ. որ յայտ առաւել զարդարեցեր զարեգակն և զլուսինն և զաստեղս. և եդեր զնոսա ՚ի հաստատութեան երկնից լուսաւորել զարարածս, և ցուցանել զժամս և զժամանակս՝ զաւուրս և զտա-

րիս. և արդ՝ ես խնդրա-
նեալս՚ի լուսոյ և ծածկելս
խաւարաւ մեղաց, հայցեմ
յամենալոյս ողորմութե-
նէդ, որպէս լուսաւորեացդ
շնորհեցեր լոյս՝ շնորհեա՛
ինձ յառաւօտ և յանհամե-
մատ լուսոյդ, փոքր մի մասն
և բաժին. և փարատեա՛
յինէն զմէգ և զխաւար յան-
ցանաց. և անանց լուսովդ
առաջնորդեա՛ ինձ յարքա-
յութիւնդ ընդ ամ՟ սբս.
փառաւորեմ զամենազօր
տէրութիւնդ հօր և որդւոյ և
հոգւոյդ սրբոյ. այժմ և
միշտ և յաւիտեանս յա՟։

## Նորին աղօթք հրեշտակապետին առաջնոյ :

Սերող եւ ներգործող բարեաց բազմապատկութ եւ ողորմած տէր իմ եւ ած իմ . որ յոյժ առաւել հրամայեցեր ջրոյն հանել յիւրենէ զհոյլս զեռնոց , եւ ձկանց ծովու , եւ թռչնոց երկնից . եւ օրհնեցեր զնոսա աճել եւ բազմանալ . եւ մինչեւ ցայսօր եւ առ յապա խառնամուկեն ՚ի վերայ նոցա :

Եւ արդ ես բազմամեղս անկեալ աղաչեմ զքեզ բազմագթեղ եւ ամենակալութ

տէր՝ մի՛ անտես առներ ըղ-
ձեղաւորս 'ի պաշտպանու-
թենէդ քումմէ՝ և մի՛ մեր-
ժեր զանցաւորս 'ի պարգե-
ւաց քոց․ այլ ցոյց լինձ զո-
ղորմ̃ութ քո և արա՛ առ իս
նշան բարի․ բարձ զբեռնիմս
բարկացուցանողիս՝ և ազա-
տեա՛ զտառապեալս 'ի տա-
ռանց մեղաց․ մի՛ բարկա-
նար լինձ տէր ըստ բազում
անօրէնութե̃ իմ̃ց, և մի՛ դա-
տապարտեր զդառնացու-
ցիչս ըստ անուան քում
սրբոյ․ այլ տուր ձեռն ա-
նօրինեցելոյս և հան 'ի խո-
րոց անդնդոց զխորասուզեալս

մեղօք · մաքրեա՛մ յաղագս
մեղաց՝ և ազատեա՛մ ՚ի խղճէ
մտաց զղջմամբքս , զոր-
դիս կորստեան արա՛ որդիս
լուսոյ · և զհեռացեալս յար-
դարութենէ հաւր առ մեր-
ձաւորաց քոյ սրբոյն և սիրե-
լեաց · զի ընդ նոսին մտեալ
՚ի մշտնջենաւոր հանգստեան
փառաւորեսցեն զհայր և զոր-
դի և զսուրբ հոգիդ · այժմ և
միշտ և յաւիտեանս յաւի-
տենից ամէն ։

Սուրբն աղօթք ուրբաթ աւուր:

[illegible] բարի և ամենա-
կարող զօրութի որ եմ՝ և ած
եմ՝. որ յայսմ աւուր հրա-
մայեցեր երկրի հանել յիւր-
մէ զգազանս և զանասունս ,
և զսողունս , և զչորքոտա-
նիս յազգս իւրեանց . զկեն-
դանիս և զընտանիս . և յայսմ
աւուր արարեր զմարդն անձն
իշխան . և կացուցեր զնա
տէր և իշխան 'ի վերայ ամե-
նայն ձեռակերտաց քոց . և
եդեր զնա 'ի դրախտին
փափկութե , պահել զպատ-
ուէրն . բայց խաբէ սատանայ-

ըստ զանցութեանն նախաՀօրն՝ որով արտաքսեցաք 'ի պայծառ պատուոյն և 'ի փափուկ փառացն: Մանաւանդ զի նա միանգամ խաբեցաւ փոքր և թեթև յանցմամբ. Իսկ ես անթիւ և մեծամեծ յանցանօք մեղանչեալ անդադար, ուստի և ո՛չ պարտաւորեցելոյս, բարձրացար յայժմ աւուր բանդ ած 'ի վերայ լաչին: Եւ արդ՝ աղաչեմ զքեզ երկայնամիտ և անոխակալ տէր իմ և ած իմ. ողորմեա ինձ ողորմեցելոյս և մեղօք լցելոյս. մի՛ ընդ վայր Հարկաներ զպատ-

կերս յոր փչեցեր. և մի՛ մասներ յաւիտենից տանջանացն, զոր ստեղծեր. զի քո եմ՝ տէր և 'ի քեզ յուսամ՝. և 'ի քէն ակն ունիմ՝ արձակել 'ի կապոց յանցանացս. ուստի և հանդիպեցուսցես զիս տէր թողութե մեղաց և քաւութե յանցանաց. և մասնակից արասցես զընտրեալս արանց արդարոց՝ և 'ի սկզբանէ ընտրելոյն. զի ընդ նոսին հանգեալ փառաւորեցից զամենազօր տէրութն զհայր և զորդի և զսուրբ հոգին. այժմ՝ և միշտ և յաւիտ՛:

## Նորին աղօթք շաբաթն առաւօտու:

Սուրբ երրորդութիւն անբաժանելի, անճառելի, եւ անաշխատ. որ յայսմ աւուր հանգեար յամ գործոց քոց, զոր սկսար առնել եւ կատարել. որ նշանակեալ հանգստեան զթաղումն ածցեալ մարմնոյդ. որ աշխատեցար բազկատարած բեւեռամամբք 'ի վէր կենսաբեր սբ. խաչին: Աղաչեմ ես ամենամեղս անկեալ աղաչեմ զքեզ Տր իմ եւ Ած իմ յս քս. եւ խնդրեմ վասն փառաց երեսաց Հօրդ լուսոյ, եւ վասն փա-

ուսկեան հոգւոյդ սրբոյ, և
վասն կամաւոր չարչարանաց
քոց, և վասն կենդանարարին
փայտին և սբ̄ բևեռայն, և
վասն հեղման քրքմատեսակ
ազատարար սբ̄ արեանդ, և
վասն երեքօրեայ թաղմանն
և հրաշալի յարութե̄ն, և
վասն կուսական կաթինն
մարմանու սբ̄յ ա̄ծածնին, և
վասն սիրոյ և բարեխօսութե̄ն
ա̄մ սբ̄ց քոց, երկնաւորաց
և երկրաւորաց, սրբեա́ զիս
յա̄մ մեղաց իմոց՝ և ազա-
տեա́ ՚ի դատն մշտոյ գե-
հենին. և արժանի արա́ զան-
պիտան ծառայս խոստայել



12869 - 58

բարեայն ընդ ա̃մ՝ սէն ․քո ․ զի ընդ նոսին հանգուցեալ փառաւորեսցիք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն ։

## ՎԵՐՋ ։

## Ցանկ աղօթագրոց.

Երես.

Աղօթք առ դուռն սբ
եկեղեցւոյ . . . . . . . . 9
Աղօթք ասացեալ 'ի
սուրբ տաճարին . . . . . 10
Աղօթք 'ի դէմս սրբոյ
պատարագին . . . . . . 13
Աղօթք առ տէրն մեր
'ի ժամ պտրգին . . . 69
Աղօթք ամ աշխարհի. 75
Աղօթք առ սբ խաչն. 83
Աղօթք առ հայրն ած. 85
Աղօթք 'ի դէմս սր-
բոյն ածածնի . . . . . . 92
Աղաչանք առ հոգին
սբ ած ճշմարիտ . . . . 103

Աղօթք առ Աստուածածին 108
Աղօթք Ճանապարհի. 111
Աղօթք միաշաբաթի
կամ կիւրակէի աւուր 113
Աղօթք երկուշաբթի 115
Աղօթք երեքշաբթի 117
Աղօթք չորեքշաբթի 120
Աղօթք հինգշաբաթի 122
Աղօթք ուրբաթի ա″ 125
Աղօթք շաբթի աւուր. 128

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

| Երես: | Տող: | Սխալ: | Ուղիղ: |
| --- | --- | --- | --- |
| 17 | 3 | զմրտս | զմիտս |
| 101 | 7 | մի՛ | մի՛ |
| 106 | 3 | պատրոնս | պատրիանս |
| 108 | 15 | .քէրովբէական | .քերովբէական |
| 116 | 10 | զվէս | զվէրս |

Երանի՛ ում թողութիւն եղեւ մեղաց . . . . և ծածկե-
ցան ամ՟ յանցանք նորա ։

ՄԱՐՏԻՐՈՍ

պատկանաւոր իմ

սարքի Հայր. տէր

Մեր Հայրապետ —

1859 ամին —

յունվարի 24 ին —

գրեց Մկրտիչ Ղուկասեան

Ղարաքիլիսա մէջ

2013
2001
ՀՀ Ազգային գրադարան
NL0014958